

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ  
30-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ  
հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի  
հունվարի 30-ի «Եվրասիական տնտեսական միության (մաքսային  
միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջների  
պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն  
իրականացնող լիազոր մարմիններ սահմանելու մասին» N 71-Ն  
որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և  
փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14-րդ  
կետով.

«14. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի  
հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա  
վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ  
051/2021) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական  
կանոնակարգ:».

2) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 23-րդ և  
24-րդ կետերով.

«23. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի  
հոկտեմբերի 5-ի N 100 որոշմամբ հաստատված «Քաղաքացիական

պաշտպանության և բնական ու տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակներից պաշտպանության համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 050/2021) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգ:

24. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի N 137 որոշմամբ հաստատված «Մետրոպոլիտենի շարժակազմի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 052/2021) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգ:»:

3) որոշման N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` 21-րդ և 22-րդ կետերով.

«21. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 5-ի N 100 որոշմամբ հաստատված «Քաղաքացիական պաշտպանության և բնական ու տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակներից պաշտպանության համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 050/2021) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգ:

22. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի N 137 որոշմամբ հաստատված «Մետրոպոլիտենի շարժակազմի անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 052/2021) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: